ՎԱՀՐԱՄ ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎՐԱ

Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները վերջին տարիներին փոխվել են ոչ միայն ձևի, բովանդակության, այլ նաև կազմակերպակառուցվածքային առումներով: «Ռազմավարական խորություն» կոչվող հայեցակարգի և «Հարևանների հետ զրո խնդիրներ» բազմիցս քննարկված ուղղություններից բացի, առավել ուշագրավ է այն հանգամանքը, թե քաղաքական ու գաղափարական կողմնորոշումները կյանքի կոչելու համար ինչպիսի գործիքակազմ և ռեսուրսներ են օգտագործվում: Այս հոդվածի նպատակն է վերլուծել, թե նախորդ տարիների համեմատ ինչպիսի փոփոխությունների են ենթարկվել արտաքին քաղաքականության իրականացման կազմակերպական և բովանդակային սկզբունքները, ինչպիսի նոր դրսևորումներ կարող է ունենալ նման քաղաքականությունը: Այդ նպատակով համեմատական կերպով հոդվածում քննարկվում են 2008–2013 թթ. ընթացքում Թուրքիայի արտաքին գործերի նախարարների կողմից դեսպանների հետ կազմակերպվող ամենամյա համաժողովները և նրանցում բարձրացված խնդիրները:

Դիվանագետների հետ ամենամյա հանդիպումներ

Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչությունը տասնամյակներ շարունակ կենտրոնական դեր է կատարել ոչ միայն արտաքին աշխարհում Թուրքիայի շահերի ներկայացման, այլ նաև ներպետական կյանքում: Տասնամյակներ շարունակ դիվանագիտական կորպուսը թուրք բարձրաստիճան զինվորականների, դատաիրավական համակարգի ներկայացուցիչների հետ

միասին համարվել է քեմալականության ողնաշարը: Հետևաբար քեմալականության կերպափոխումը միայն զինվորականության դիրքերի թուլացմամբ հնարավոր չէր իրականացնել, ուստի «Արդարություն և զարգացում» կուսակցության համար էական էր արտաքին քաղաքականության ակտիվությանը և դիվանագետների սերնդափոխությանը զուգահեռ ձգտել փոխելու դիվանագետների հետ աշխատանքի սկզբունքները և մեթոդները: Հետևաբար վերջին տարիներին բազմաթիվ առիթներով խրախուսվող թուրքական ակտիվ արտաքին քաղաքականության ձեռքբերումների պատճառներից մեկը Անկարա – դիվանագիտական ներկայացուցչություններ կապի խորացումն է և համակարգումը: Դիվանագիտական կորպուսի և դեսպանների կողմից այս հանդիպումների վերաբերյալ հնչող գնահատականները տարբեր են: Ոմանք բարձր են գնահատում նման հանդիպումները, քանի որ խորհրդակցությունների ընթացքում շահագրգիռ ինստիտուտների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի են ունենում քննարկումներ, հստակեցվում են խնդիրները և ընդհանուր անելիքները, մյուսների կարծիքով նման հանդիպումները կարևոր են, քանի դեռ Դավութօղլուն չի սկսում իր խիստ ակադեմիական դասախոսությունները և տեսական խնդիրների քննարկումը[1]: Թուրքական ազդեցիկ լրատվամիջոցների սյունակագիրները ևս քննադատում են նման ձևաչափով անցնող քննարկումները՝ Դավութօղլուին մեղադրելով այն բանում, որ համաժողովից համաժողով նա ավելացնում է հռետորաբանական շեշտադրումները և դեսպանների հետ հանդիպումները վերածում «մեկ դերասանի թատրոնի», միակողմանիորեն պարտադրում սեփական հայացքները, հավակնոտ կերպով խոսում Թուրքիայի արտաքին քաղաքականության հզորության և առասպելական էության, համաշխարհային գործընթացների ձևավորման գործում և «պատմության արարման» ընթացքում Թուրքիայի առանցքային դերի մասին և այլն՝ մնալով անտարբեր քննադատությունների և տարաբնույթ հարցերի նկատմամբ[2]: Նույն սկզբունքով են աշխատում նաև մյուս գերատեսչությունների ղեկավարները, որոնք, երկրորդելով Թուրքիայի վարչապետին և ԱԳ նախարարին, ոչ միայն գովաբանում են արտաքին քաղաքականության նվաճումները, այլ նաև օգտագործում են առիթը՝ քննադատելու այն

[1] Հարցազրույց Անկարայի TOBB համալսարանի պրոֆեսոր Բահադիր Պեհլիվանթյուրքի հետ, 25.11.2012 թ. Անկարա:

[2] Barçın Yinanç, Turkey needs active ambassadors to pacify PM and FM, Hürriyet Daily News, 08.01.2013.

երկրներն ու կառույցները, որոնք անցած տարվա ընթացքում քննադատել են Թուրքիային:

Համաժողովների հետ կապված՝ երկու կարևոր ևս հանգամանք կա. ա) բացառությամբ առաջին համաժողովի, մյուսներն ունեցել են երկու փուլ, առաջին հանդիպումը տեղի է ունենում մայրաքաղաքում, իսկ երկրորդ փուլը՝ քաղաքներից մեկում, բ) բացառությամբ առաջին համաժողովի, մյուսներին ներկա են գտնվել ինքնավարությունների ղեկավարներ, վարչապետներ և արտգործնախարարներ այլ երկրներից:

2008 թ. հունիսի 15–18–ը Ալի Բաբաջանի նախաձեռնությամբ Անկարայում առաջին անգամ կազմակերպվեց թուրք դիվանագետների համաժողով, որի խորագիրը հետևյալն էր՝ «Թուրքիայի արտաքին քաղաքականությունը. կողմնորոշումները և առաջնահերթությունները»: Միջազգային հարաբերությունների ուսումնասիրությունների ասոցիացիայի նախագահ Բուրաք Յալըմի կարծիքով առաջին համաժողովը մնաց ստվերում, քանի որ 2008 թ. Թուրքիայի արտաքին հարաբերությունները այնքան էլ հանրահայտ չէին[3]:

Դեսպանների համաժողով 2009 թ. տեղի չունեցավ, փոխարենը միայն 2010 թ. հունվարի 4–8–ը հնարավոր եղավ Անկարայում, ապա Մարդինում կազմակերպել 2–րդ համաժողովը: Մեկ տարի ընդմիջում տալու պատճառների մասին հայտարարություն չի արվել, հետևաբար բուն պատճառներն անհայտ են: 2009 թ. մայիսի 1–ին՝ Ա. Դավութօղլուի արտգործնախարար նշանակվելուց հետո, սա նրա առաջին համաժողովն էր: Երկրորդ հանդիպման խորագիրը հետևյալն էր՝ «Ժողովրդավարություն, անվտանգություն և կայունություն. արտաքին քաղաքականության տեսլականը 2010 թ.»[4]: Համաժողովին ներկա էին Բրազիլիայի, Գերմանիայի, Ճապոնիայի արտգործնախարարները, Կիպրոսի թուրքական հատվածի նախագահ Մեհմեթ Ալի Թալաթը, Պաղեստինի պետության ղեկավար Մադմուդ Աբասը: Հիմնական ելույթում Դավութօղլուն նշեց, որ երկար ժամանակ Թուրքիան ակտիվորեն չի մասնակցել տարածաշրջանային գործընթացներին, սակայն Թուրքիայի աշխարհագրական դիրքը պարտադրում է ակտիվ մասնակցություն ԵՄ–ի և համաշխարհային գոր-

[3] Burak Yalım, 4. Büyükelçiler Konferansı: “Türk Dış Politikasında “Durmak ve Anlamak”, 2011, http://www.tuicakademi.org/index.php/yazarlar1/34–burak–yalim/2554–4–buyukelciler–konferansı–turk–dis–politikasinda–durmak–ve–anlamakq

[4] No: 244, 30 Aralık 2009, İkinci Büyükelçiler Konferansı Hk., http://www.mfa.gov.tr/no_–244_–30–aralik–2009_–ikinci–buyukelciler–konferansı–hk_.tr.mfa

ծերին: Նրա խոսքերով «Թուրքիան ունակ է առավել ակտիվ արտաքին քաղաքականություն վարելու, քանի որ դրա համար կան պատմական հիմքեր, և ժամանակին միայն 5–6 պետություն կարող էին Թուրքիայի հետ մրցել ակտիվ արտաքին քաղաքականության առումով»[5]: Նրա խոսքերով տարածաշրջանային ճգնաժամերը պետք չէ անտեսել, այլ պետք է անհրաժեշտ ջանքեր ներդնել դրանց լուծման հնարավորությունների ուղղությամբ[6]: Համաժողովի ընթացքում քննարկվեցին Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգային մի քանի խնդիրներ ըստ տարածաշրջանների, նշվեց նաև 2010 թ. 26 նոր դիվանագիտական առաքելությունների բացման մասին: Այս հանդիպումը կարևոր էր նրանով, որ Դավութօղլուն, առաջին անգամ հանդես գալով ԱԳ նախարարի պաշտոնում, ներկայացրեց արտաքին հարաբերությունների զարգացման իր տեսլականը ոչ միայն 2010 թ., այլ նաև մինչև 2023 թ. ընկած ժամանակահատվածի համար:

2011 թ. հունվարի առաջին տասնօրյակում տեղի ունեցած երրորդ համաժողովի խորագիրը հետևյալն էր՝ «Տեսլական դիվանագիտություն. Համաշխարհային և տարածաշրջանային կարգը Թուրքիայի դիտանկյունից»: Այս համաժողովին ներկա էին Հունաստանի վարչապետ Գեորգի Պապանդրեուն, ինչպես նաև Աֆղանստանի և Պակիստանի արտգործնախարարները: Վերջիններս ելույթով հանդես եկան Անկարայում, իսկ Պապանդրեուն՝ Էրզրումում[7]: Համաժողովի վերաբերյալ ԱԳՆ–ի տարածած հաղորդագրության մեջ նշվում էր, որ երրորդ համաժողովի նպատակն էր ճշգրտել երկրորդ համաժողովի ընթացքում բարձրացված խնդիրների լուծման հարցում արձանագրված առաջընթացը, քննարկել արտաքին քաղաքականության օրակարգում և տարբեր տարածաշրջաններում առաջացած նոր խնդիրները և առաջարկել լուծումներ: Հաղորդագրությունում նաև նշվում էր, որ դեսպանների հետ նման հանդիպումները դարձել են ԱԳՆ–ի ինստիտուցիոնալ մշակույթի մաս[8]: Համաժողովի ընթացքում եղավ մեկ ընդհանուր նիստ՝ «Ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, օրենքի գերակայություն» խորագրով, և մի քանի այլ նիս-

[5] Turkish diplomat says Turkey needs a new powerful vision in foreign policy, Today's Zaman, 04.01.2010

[6] Müge Özbağli, 2.Büyükelçiler Konferansı Ankara'da başladı, http://www.abvizyonu.com/basindan/2buyukelciler–konferansi–ankarada–basladi.html

[7] (Dip) Third Conference of Ambassadors Begins, http://www.thefreelibrary.com/(DIP)+THIRD+CONFERENCE+OF+AMBASSADORS+BEGINS.–a0245701735

[8] Üçüncü Büyükelçiler Konferansı Sonuç Bildirisi, http://www.mfa.gov.tr/ucuncu–buyukelciler–konferansi–sonuc–bildirisi.tr.mfa

տեր՝ «Մեր ԵՄ անդամակցության գործընթացի հինգերորդ տարվա հաշվեկշիռը: Բանակցություններ և բարեփոխումների գործընթացը», «Տնտեսական և առևտրային հարաբերություններ», «Մշակույթ և հանրային դիվանագիտություն» և «Արտերկրում ապրող թուրքերը և հյուպատոսական ծառայություններ» խորագրերով: Նիստերի խորագրերը հուշում են, որ առանձին ոլորտներում քննարկվել են հստակ խնդիրներ, դրվել նպատակներ: Դավութօղլուն իր ելույթում նշեց, որ թուրք դիվանագետները պետք է գործեն հրշեջների նման և անմիջապես շտապեն այն վայրերը, որտեղ Թուրքիայի շահերը վտանգված են, սակայն թուրք դիվանագետները պետք է լինեն նաև պլանավորողներ[9]: Նման ձևաչափով անցկացվող հանդիպումները նաև լավ հնարավորություն են, որպեսզի առանձին ոլորտների և ուղղությունների պատասխանատուները կատարեն բավական ինքնավստահ, քննադատական և ոչ միանշանակ հայտարարություններով: Օրինակ՝ ԵՄ գործերի նախարար և գլխավոր բանակցող Էգեմեն Բաղըշը հայտարարեց, որ Թուրքիան այժմ ի վիճակի է բացելու ԵՄ–ի հետ բանակցությունների ևս 16 փաթեթ՝ ի հավելումն արդեն բացված 13–ի և կարճաժամկետ և միջնաժամկետ առումներով փակելու 12–ը: Նա հատուկ ուշադրություն հատկացրեց էներգետիկային վերաբերող փաթեթին՝ նշելով, որ էներգետիկ ոլորտում ամենաշատ խնդիր ունեցող ԵՄ անդամ երկրի կողմից այս փաթեթի վրա արգելանք դնելը տրագիկոմեդիա է հիշեցնում: Թեև նա չհստակեցրեց երկրի անվանումը, սակայն հասկանալի էր, որ խոսքը Կիպրոսի մասին էր: Նա նաև շնորհակալություն հայտնեց դեսպաններին Թուրքիայի նկատմամբ անարդարությունների հետևանքները նվազագույնի հասցնելու և Թուրքիայի ճշմարտացիությունը բոլորին հասանելի դարձնելու համար[10]:

Չորրորդ հանդիպումը, որը տեղի ունեցավ 2011 թ. դեկտեմբերի 23–30–ը, ուներ հետևյալ խորագիրը՝ «Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական առանցքները. Ժողովրդավարական արժեքները և ազգային շահերը»: Հանդիպմանը ներկա էր Սերբիայի, Շվեյցարիայի և Ուկրաինայի արտգործնախարարները, միջոցառման երկրորդ փուլն անցկացվեց Էդիրնեում: Այս հանդիպման ընթացքում Դավութօղլուն առաջ մղեց դեռ երրորդ համաժողովի ընթացքում առաջ քաշված «խելացի ազգ» դրույթը՝ այն ներկայացնելով որպես «խելացի մարդ»–«խելացի ազգ»–

[9] Third Ambassador's Conference In Ankara, http://www.ankarascene.com/haber/third–ambassadors–conference–in–ankara–469.html

[10] Egemen Bağış, 3. Büyükelçiler Konferansı, http://egemenbagis.com/tr/1818

«խելացի դեսպան» եռամիասնության մաս: Նա նաև պնդեց, որ դեսպանները պետք է լինեն քաջատեղյակ պատմության, տնտեսագիտության, ձեռնարկատիրության վերաբերյալ այնպիսի խորությամբ, ինչպես գիտնականները, և պետք է գործեն զգուշությամբ՝ ենթադրելով, որ նրանց ուսերին նստած են աղավնիներ[11]:

Նա նաև նշեց, որ թեև սառը պատերազմի ավարտի ժամանակ Թուրքիան հաղթող կողմում էր, սակայն քաղաքական կամքի բացակայության և կառավարման համակարգի խոցելիության պատճառով 1991 թ–ից 2001 թ. ընկած ժամանակահատվածը Թուրքիայի համար դարձավ կորսված տասնամյակ, իսկ համընդհանուր քաղաքականության համար այն պետք է համարել «աշխարհաքաղաքական երկրաշարժի» տասնամյակ: Դավութօղլուն նաև նշեց, որ հարկավոր է անել ամեն ինչ, որպեսզի կորսված տասնամյակի բացասական հետևանքները վերացնելու համար դիվանագետներն անեն հնարավորինը: Այդ նպատակով նա դեսպաններին խորհուրդ տվեց ստեղծել 25–րդ ժամը, եթե օրվա ընթացքում չի հաջողվել անել պլանավորածը, և չքնելը պետք է արգելված չլինի բարձրաստիճան դիվանագետների համար: Նա նաև ընդունեց, որ թեև Թուրքիայի ԱԳՆ–ն բավական ակտիվ է, սակայն մյուս երկրների համեմատությամբ ունի բավական սահմանափակ աշխատակազմ: Նա հավելեց, որ 2001–2011 թթ. ընկած ժամանակահատվածը պետք է համարել վերականգնման, իսկ մինչև 2023 թ. հարկ է աշխատել ամրապնդման կարգախոսի ներքո[12]:

Դավութօղլուի ելույթի առավել ուշագրավ հատվածներից էին հայկական և հրեական համայնքների վերաբերյալ նրա կատարած դիտարկումները: Ըստ Դավութօղլուի՝ Թուրքիան լքած յուրաքանչյուր հայ և հրեա թուրքական Սփյուռքի մաս են կազմում, հետևաբար հարկավոր է կապ հաստատել տարբեր երկրներում ապրող Թուրքիայի նախկին քաղաքացի համարվող հայերի և հույների հետ և նրանց ներկայացնել համատեղ մշակույթն ու հազարամյա պատմությունը՝ նկատի ունենալով «միասնական պատմության տարածաշրջանի համար, միասնական քաղաքացիություն Անատոլիայում»[13] կարգախոսը: Նա դեսպաններին

[11] Burak Yalım, 4. Büyükelçiler Konferansı: "Türk Dış Politikasında "Durmak ve Anlamak", 2011, http://www.tuicakademi.org/index.php/yazarlar1/34–burak–yalım/2554–4–buyukelciler–konferansı–turk–dıs–politikasında–durmak–ve–anlamak.

[12] Burak Yalım, 4. Büyükelçiler Konferansı: "Türk Dış Politikasında "Durmak ve Anlamak", 2011, http://www.tuicakademi.org/index.php/yazarlar1/34–burak–yalım/2554–4–buyukelciler–konferansı–turk–dıs–politikasında–durmak–ve–anlamak.

[13] Նույն տեղում:

կոչ արեց արդյունավետ աշխատանք տանելու այդ ուղղությամբ և ամուր կապեր հաստատելու դիվանագիտական առաքելության երկրի ժողովրդի հետ: Այս հայտարարությունը կարևոր էր այն առումով, որ առաջին անգամ Թուրքիայի արտգործնախարարը նման հայտարարություն էր կատարում հայերի մասին:

2013 թ. հունվարին տեղի ունեցավ հերթական համաժողովը՝ «Մարդասիրական դիվանագիտություն» խորագրով, որի մանրամասները կներկայացվեն ստորև:

«Հումանիտար դիվանագիտության» առանձնահատկությունները

Ս. թ. հունվարին Անկարա և Իզմիր (Զմյուռնիա) քաղաքներում տեղի ունեցավ դիվանագիտական կորպուսի հետ հինգերորդ ամենամյա հանդիպումը: Հինգերորդ համաժողովի խորագիրը տարբերվում էր նախորդներից, քանի որ առաջին անգամ միջոցառումն անցնում էր գործնական խորագրի ներքո: Հանդիպմանը ներկա էին նաև Սինգապուրի, Շվեդիայի և Բրազիլիայի արտաքին գործերի նախարարները[14]: Օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությունը միջոցառմանը որոշակիորեն նպաստեց խորագրի շուրջ տարաբնույթ գործնական քննարկումների անցկացմանը: Առավել ուշագրավ էր Շվեդիայի և Բրազիլիայի արտգործնախարարների մասնակցությունը համաժողովին, ավելին՝ Բրազիլիայի արտգործնախարարը երկրորդ անգամ էր մասնակցում թուրք դեսպանների հետ հանդիպմանը: Թուրքիայի արտաքին քաղաքականության իրագործման ընթացքում Բրազիլիան և առավելապես Շվեդիան էական աջակցություն են ցուցաբերել: Բավական է հետևել Թուրքիայի վերաբերյալ քվեարկությունների վիճակագրությանը կամ ԵՄ–ի անդամակցության գործընթացում Շվեդիայի անվերապահ աջակցության դրսևորումներին: Շվեդ դիվանագետները ևս, ավարտելով դիվանագիտական առաքելությունը Թուրքիայում, շտապում են ընդգծված դրական լույսի ներքո հուշագրություններ գրել Թուրքիայի իշխանությունների և թուրք ժողովրդի մասին[15]:

Այս համաժողովին Շվեդիայի և Բրազիլիայի գլխավոր դիվանագետների մասնակցությունը պայմանավորված էր նաև մեկ այլ

[14] Beşinci Büyükelçiler Konferansı, http://www.mfa.gov.tr/besinci–buyukelciler–konferansı.tr.mfa

[15] Ann Dismorr, Turkey Decoded, London, San Francisco: Saqi, 2008; Henrik Liljegren, From Tallin to Turkey: As a Swede and Diplomat, Merkez Kitapcılık, Istanbul, 2004.

հանգամանքով: 2012 թ. սեպտեմբերին ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի շրջանակներում Թուրքիան Բրազիլիայի և Շվեդիայի հետ հանդես եկավ «երեք մայրցամաքներից երեք միջին տերություն» նախաձեռնությամբ: Այդ նախաձեռնության մասին քիչ մանրամասներ են հայտնի, սակայն այդ երկու դիվանագետների մասնակցությունը վկայում է այն բանի մասին, որ Թուրքիան մտադիր է առավել խորացնել այդ երկրների հետ հարաբերությունները: Թուրքիայի երկկողմ և բազմակողմ հարաբերությունները Բրազիլիայի և Շվեդիայի հետ վերջին շրջանում աչքի են ընկել տարաբնույթ համագործակցությամբ: Ավելին՝ երեք երկրների միջև համագործակցության հեռանկարները խորացնելու նպատակով երեք արտգործնախարարները՝ Կարլ Բիլդը, Անտոնիո Պատրիոտան և Ահմեդ Դավութօղլուն, 2013 թ. հունվարի 5–ին Իզմիրում հայտարարեցին «Խաղաղության կառուցման եռակողմ համերաշխություն» կոչվող նոր խորհրդակցական կառույցի ստեղծման մասին: Ըստ Դավութօղլուի՝ այդ նախաձեռնության անգլերեն տարբերակը «Trilateral Solidarity for Building Peace» հատուկ այնպես էր ընտրված, որ ընդգծվեր մասնակից երկրների անգլերեն անվանումների առաջին տառերը[16]: Համաձայն համատեղ հայտարարության՝ կողմերը պարտավորվեցին համատեղ պայքարել միջազգային հանրությանը հուզող մի շարք մարտահրավերների դեմ (Արաբական վերածնունդ, Պաղեստինյան հարց, ահաբեկչություն, աղքատություն, կլիմայի փոփոխություն, ինտերնետ ազատություն և միջուկային զենքի չտարածում)[17]: Հայտարարությունում նաև նշվում էր, որ երեք երկրներն էլ իրենց հզորությունը կառուցում են՝ հենվելով ժողովրդավարության, հզոր տնտեսության, աշխարհագրական դիրքի, տարածաշրջանային ներգրավման, համաշխարհային գործընթացներում մասնակցության և այլ ընդհանուր արժեքների վրա: Այդ նպատակին հասնելու համար կողմերը որոշեցին կազմակերպել կանոնավոր խորհրդակցություններ՝ կարծիքների փոխանակման և ջանքերի մոտարկման նպատակով[18]: Հենվելով հայտարարության առաջնային և երկրորդային ուղերձների վրա՝ կարող ենք կատարել մի քանի եզրահանգում: Նախ Թուրքիան ձգտում է ձևավորելու նորանոր դաշինքներ, որոնք նրան կօգնեն առավել հաջողված առաջ մղելու միջազգային հարաբերությունների այն օրակարգային հարցերը,

[16] Türkiye–Brezilya–İsveç Arasında Ortak İstişare Mekanizması Oluşturuldu, http://www.haberler.com/turkiye–brezilya–isvec–arasinda–ortak–istisare–4225092–haberi/

[17] Trilateral Solidarity for Building peace http://www.regeringen.se/sb/d/15727

[18] Նույն տեղում:

որոնցում հարկավոր են դաշնակիցներ: Դատելով վերոհիշյալ մարտահրավերների թվարկումից՝ Թուրքիան առավելապես շահագրգռված է իր անմիջական հարևանությամբ առկա խնդիրների կապակցությամբ ձեռք բերելու Շվեդիայի և Բրազիլիայի աջակցությունը, ինչպես նաև ընդլայնելու իր տնտեսական ներկայացվածությունը Սկանդինավիայում և Հարավային Ամերիկայում: Այս երկու երկրները միջազգային հարաբերություններում ունեն էական դերակատարում, հետևաբար այդ երկու երկրների հետ հարաբերությունների խորացմամբ Թուրքիայի իշխանությունները ձգտում են շեշտելու համաշխարհային դերակատարության վերաբերյալ առկա հավակնությունները: Ընդ որում՝ նախկինում թե՛ Բրազիլիայի, թե՛ Շվեդիայի հետ արձանագրվել են համագործակցության մի շարք քաղաքական ծրագրեր: Հասկանալիորեն՝ Շվեդիան և Բրազիլիան նույնպես ունեն սեփական օրակարգը և Թուրքիայի միջոցով ձգտում են Մերձավոր Արևելքում ձեռք բերելու ազդեցության լծակներ, ներգրավելու թուրքական ներդրումներ և համախմբվելով ընդհանուր օրակարգի ներքո՝ ձգտում են առաջ մղելու ընդհանուր հարցեր: Այս առումով Էգեմեն Բաղըշի ելույթում տեղ գտած որոշ դրույթներ միտված էին առավել ընդգծելու Թուրքիայի դերակատարումը Մերձավոր Արևելքում: Նա նշեց, որ Մերձավոր Արևելքում տեղի ունեցած փոխակերպումներում Թուրքիայի ունեցած կարևոր դերակատարման հետևանքով Արևմուտքում էականորեն փոխվել է Թուրքիայի վերաբերյալ ընկալումը: «Այսօր, երբ ինչ-որ պաշտոնյա այցելում է տարածաշրջան իր երկրի քաղաքականությունը մշակելու համար, նա լսում է մեր կարծիքը, խորհրդակցում մեզ հետ»[19]:

Վերջին տարիներին միջազգային ուսումնասիրություններում Բրազիլիան և Թուրքիան հաճախ են նշվում որպես տնտեսական ակտիվության շնորհիվ ակտիվ արտաքին քաղաքականություն իրականացնող երկրներ, որոնք, համապատասխան տարածաշրջաններում կարևոր դերակատար լինելուց զատ, դարձել են առավել ընդգրկուն միջազգային օրակարգի խաղացողներ: Բրազիլիայի տնտեսությունը, որը 6-րդն է աշխարհում, նախատեսվում է 10 տարի անց դարձնել 4-րդը կամ 5-րդը, Թուրքիան նույնպես ձգտում է 10 տարի անց բարելավելու տնտեսական զարգացման ցուցանիշները՝ 16-ից հասնելով 10-րդ ցուցանիշին:

Վերջին համաժողովի ընթացքում Թուրքիայի արտգործնախարար Դավութօղլուն հրապարակեց արտաքին քաղաքականու-

[19] 5. Büyükelçiler Konferansı, http://egemenbagis.com/tr/6256

թյան հայեցակարգային նոր թեզերը՝ «հումանիտար դիվանագիտություն» խորագրի ներքո: Փորձագիտական հանրության մոտ հնչեցին կարծիքներ, որ երկար տարիներ չարչրկված, տարաբնույթ գնահատականների արժանացած «ռազմավարական խորություն» հայեցակարգը իրեն սպառել է, և անհրաժեշտություն կա սեղանին դնելու նոր փաստաթուղթ: Անշուշտ, ամբողջովին նոր ռազմավարության մասին խոսելու համար դեռ հիմքեր չկան, սակայն ակնհայտ է, որ Թուրքիայի իշխանությունները քաջ գիտակցում են, որ անհրաժեշտություն է առաջացել որոշ խմբագրման ենթարկել գործող արտաքին քաղաքականությունը:

2002–2009 թթ. ընթացքում, երբ Դավութօղլուն հետնաբեմից էր մասնակցում արտաքին քաղաքականության մշակմանը և իրագործմանը, Թուրքիայում կար ընդհանուր համոզմունք, որ տարածաշրջանային և արտատարածաշրջանային քաղաքականությունը աննախադեպ հաջողության է հասել: 2009 թ. մայիսին՝ արտգործնախարար նշանակվելուց հետո, ևս 2–3 տարի Դավութօղլուն շարունակում էր իր քաղաքականությունը կառուցել՝ հենվելով իր տեսական հիմնավորումների, փիլիսոփայական ձևակերպումների, նախկին համոզմունքների և մոտեցումների վրա: Իսրայելի, Սիրիայի, Հայաստանի հետ հարաբերություններում նոր զարգացումների լույսի ներքո Դավութօղլուն շարունակում է մերժել արտաքին քաղաքականության հայեցակարգային դրույթների վերանայման մոտեցումները: Հետևաբար «հումանիտար դիվանագիտության» մասին առաջին ակնարկը բավական էր տարաբնույթ մեկնաբանությունների համար: Փորձագիտական հանրությունը շտապեց պնդել, որ Թուրքիայի իշխանությունները սկիզբ են դրել արտաքին քաղաքականության կուրսի նոր փոփոխության:

Իրականում դիվանագետների հետ վերջին հանդիպման ժամանակ Դավութօղլուի ելույթը և ընդհանուր շեշտադրումները վկայում են այն մասին, որ եթե վաղ է արտաքին քաղաքականության նոր հայեցակարգի մասին խոսելը, ապա կարող ենք պնդել, որ Թուրքիայի դիվանագիտության հիմնական գաղափարական մոտեցումներում տեղի են ունենում շեշտադրումների փոփոխություն և առաջնահերթությունների որոշակի վերադասավորում:

«Հումանիտար դիվանագիտության» (insani diplomasi) մասին Դավութօղլուի ելույթում և ընդհանուր քննարկումներում գերակշռում էին մի քանի ընդհանուր շեշտադրումներ, որոնք նպատակ են հետապնդում դիվանագետների համար առավել ընկա-

լելի դարձնելու նոր մոտեցման էությունը: «Դիվանագիտության հետ միասին մարդասիրական բաղադրիչները ևս պետք է իրագործվեն»,— նշեց Դավութօղլուն՝ գերազանցապես հղում կատարելով Աֆրիկայում Թուրքիայի արձանագրված դիվանագիտական ձեռքբերումների մարդասիրական բաղադրիչին[20]:

Առաջին խնդիրը, որը նշվեց որպես «հումանիտար դիվանագիտության» ենթահայեցակարգ, վերաբերում էր արտերկրում ապրող Թուրքիայի քաղաքացիներին և ազգությամբ թուրքերին մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը: Այս դրույթը մի քանի նպատակներ է հետապնդում, որոնցից ամենասկզբունքայինն այն էր, որ Թուրքիան մտադիր է ընդլայնել իր ներկայացվածությունն արտերկրում: Թուրքիայի սահմաններից դուրս գործում են 172 դիվանագիտական ներկայացուցչություններ, որը 9–րդ ցուցանիշն է աշխարհում: Թուրքիան մտադիր է գալիք տարիների ընթացքում այդ թիվն էականորեն ավելացնել և դառնալ 5–րդը: ԱԳՆ–ն մտադիր է նաև շարունակել Թուրքիա մուտքի արտոնագրի ազատականացման քաղաքականությունը՝ նպատակ ունենալով Թուրքիան առավել հասանելի դարձնելու ներդրումների, զբոսաշրջության, առևտրի և մի շարք այլ առումներով: Թուրքիան ցանկանում է այս քայլի շնորհիվ էականորեն ընդլայնել իր ներկայացվածության աշխարհագրությունը: Համաժողովի ընթացքում ելույթ ունեցավ նաև փոխվարչապետ Բեքիր Բոզդաղը՝ նշելով, որ թուրք դիվանագետները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն նաև արտերկրում ապրող նոր սերնդի թուրքերի մոտ մայրենի լեզվի պահպանության խնդիրներին[21]:

Անցած տասնամյակի ընթացքում Թուրքիայի իշխանությունները հետևողականորեն ավելացնում էին Թուրքիայի ներկայացվածությունը տարաբնույթ միջազգային հեղինակավոր կազմակերպություններում: Դա տեղի էր ունենում թե՛ լիիրավ անդամի, թե՛ դիտորդի կարգավիճակ ձեռք բերելու շնորհիվ: Հաջորդ նպատակը երկրագնդի տարբեր հատվածներում առկա ճգնաժամային գոտիներում առավել ակտիվ ներգրավվածությունն է: 2002 թ. ի վեր Թուրքիան ձգտել է էականորեն բարձրաձայնելու Աֆրիկայի, Մերձավոր Արևելքի և Ասիայի տարբեր երկրներում ապրող իսլամադավան փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խնդիրը: Ավելին՝ զգալիորեն ավելացել է նաև Թուրքիայի

[20] Ankara to focus on "human" diplomacy, Hürriyet Daily News, 01.01.2013

[21] Bekir Bozdağ: Turks living abroad have "equal participation problem", http://www.habermonitor.com/en/haber/detay/bekir–bozdagturks–living–abroad–equal–partic/76175/

վարչապետին կից գործող Թուրքական համագործակցության և համակարգման գործակալության (ԹՀՀԳ–TIKA) դերակատարումը: Վերջին տարիների ընթացքում շուրջ 30 երկրներում բացվել են ԹՀՀԳ–ի գրասենյակներ, և նրա կողմից տրվող նյութական օժանդակության չափերը վերջին տասնամյակում աճել են 27 անգամ՝ 2011 թ. հասնելով 2,1 մլրդ ԱՄՆ դոլարի[22]: Վերջին տարիների ընթացքում Թուրքիան հատկապես զգայուն էր Պաղեստինի, Սուդանի, Աֆղանստանի, Մյանմարի և մի շարք այլ երկրներում տեղի ունեցող քաղաքացիական պատերազմների, բնակության նկատմամբ իրականացվող ճնշումների, սոցիալական զրկանքների, բռնաճնշումների վերաբերյալ հարցերում: Այս առումով Բաղդշը հայտարարեց, որ Սիրիայում, Աֆղանստանում, Սոմալիում և Եգիպտոսում այսօր կան միլիոնավոր մարդիկ, որոնք իրականում քաջատեղյակ են, թե Թուրքիան ինչ դեր է կատարում նրանց համար[23]: Համաիսլամական համերաշխության մոտեցումից զատ՝ Թուրքիան մտադրություն ունի նաև խորացնելու ներկայացվածությունը Ճգնաժամային այլ գոտիներում: Նման փորձ Թուրքիան ձեռք էր բերել հարավօսական, իսրայելա–լիբանանյան պատերազմների և Գազայի հատվածում Իսրայելի հրետակոծությունների ժամանակ: Երրորդ նպատակն էր հումանիտար խնդիրներին առնչվող հարցերում բարձրացնել ՄԱԿ–ի ներգրավման ինտենսիվությունը: Նոր մոտեցման մեջ կան հստակ ուղղություններ, որոնք չնկատել չենք կարող: Առաջին հերթին իսլամական համերաշխության սկզբունքի վերհանումն է, այնուհետև թուրքական դեմոկրատիայի և աշխարհիկ մոդելի արտահանման հերթական փուլն է:

Դավութօղլուի օրոք նոր նշանակություն տրվեց Թուրքիայում գործող հասարակական կազմակերպությունների, բիզնեսմենների, սոցիալական խմբերի, մտավորականների, վերլուծական կենտրոնների և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունների հետ ԱԳՆ–ի համագործակցության խորացմանը: Այս քաղաքականությունը տարբերվում էր նախորդ ժամանակահատվածից այն առումով, որ տասնամյակներ շարունակ միջազգային հարաբերությունները և արտաքին գործերն ընկալվել և ներկայացվել են բացառապես որպես դիվանագետների ոլորտի անելիք[24]: Ավելին՝ արտերկրում նույնպես Թուրքիան ձգտում

[22] Şaban Kardaş, Turkey's Development Assistance Policy: How to Make Sense of the New Guy on the Block, The German Marshall Fund of the US, 04.02. 2013, էջ 1–2

[23] 5. Büyükelçiler Konferansı, http://egemenbagis.com/tr/6256

[24] Bulent Aras, Davutoğlu's Era in the Turkish Foreign Policy, Insight Turkey, Foundation for Political, Economic and Social Research, May, 2009, no. 32.

է խորացնելու համագործակցությունը՝ հենվելով այլ երկրներում ազդեցիկ հասարակական կազմակերպությունների և գիտավերլուծական կենտրոնների վրա:

Հարկ է առանձին վերլուծել հատկապես գործարարների և առևտրային կազմակերպությունների հետ Թուրքիայի ԱԳՆ-ի արդյունավետ համագործակցությունը: Իհարկե, 1980-ականներին ևս Թ. Օզալը սերտորեն համագործակցում էր գործարարների հետ արտաքին քաղաքականության իրականացման համար, սակայն Էրդողանի օրոք թե՛ ձևը, թե՛ բովանդակությունը էական փոփոխությունների են ենթարկվել: Եթե 1980-ականներին Թուրքիայի համար արտաքին առևտուրը երկիրը բացելու, արտահանելու և գումար վաստակելու նպատակ էր հետապնդում[25], ապա 2000-ական թթ. այդ ամենին գումարվեց նաև նոր շուկաներում տնտեսական երկարաժամկետ ներկայացվածության ապահովումը, որն անհնար էր իրականացնել առանց մշակութային և քաղաքական լծակների օգտագործման: Ավելին, ներկայացնելով արտահանման ծավալները՝ ավելի ըմբռնելի է դառնում արտահանման շուկաներում երկարաժամկետ ներկայացվածություն ապահովելու Թուրքիայի իշխանությունների ձգտումը: 2012 թվականին 2002 թ. համեմատ արտահանման ծավալները աճել են ավելի քան 400 տոկոսով՝ 36 միլիարդ դոլարից հասնելով 150 միլիարդի: Թուրքիայի Կենտրոնական բանկի ռեզերվները ևս նույն ժամանակահատվածում շեշտակի աճ են գրանցել՝ 27,5 մլրդ դոլարից հասնելով 121 մլրդ-ի: Միջազգային արժութային ֆոնդին Թուրքիայի երբեմնի 23,5 մլրդ դոլար պարտքից մնացել է ընդամենը 860 միլիոն, որը մոտ ժամանակներում ամբողջությամբ կմարվի: Թուրքիան մտադիր է նաև ավելացնել իր կողմից հատկացվող վարկային փոխառությունները՝ դրանք հասցնելով 5 մլրդ դոլարի[26]:

Այսպիսով՝ Էրդողանի և Դավութօղլուի համար գործարար համայնքի ներգրավումը արտաքին քաղաքականության իրականացման նպատակով դարձավ անշրջելի գործընթաց: Գործարար համայնքի հետ համագործակցության խորացման և անելիքների համադրման նպատակով Էրդողանը վերակտիվացրեց 1986 թ. հիմնադրված Արտաքին տնտեսական հարաբերությունների խորհրդի և 1993 թ. հիմնադրված՝ Թուրք արտահանողների խորհրդի գործունեությունը, նոր սկզբունքներով սկսեցին գործել

[25] Altay Atlı, Businessmen and Turkey's Foreign Policy, Policy Brief Series, International Policy and Leadership Institute, 2011, p. 3.

[26] PM Erdoğan praises economy's ten years, Hurriyet Daily News, 31.12.2012.

1990 թ. հիմնադրված Անկախ արդյունաբերողների և գործարարների միությունը (MUSIAD) և Թուրքիայի արդյունաբերողների և գործարարների միությունը (TUSIAD): Կենտրոնական Թուրքիայում նոր արդյունաբերական կենտրոնների ի հայտ գալը ստեղծեց նաև նոր գործարար միություններ, որոնցից առավել հայտնի էր Թուրք արդյունաբերողների և գործարարների համադաշնությունը (TUSKON):

Եզրակացություն

Արտերկրում դիվանագիտական ծառայություն իրականացնող դեսպանների և բարձրաստիճան դիվանագետների հետ նախ Բաբաջանի, ապա Դավութօղլուի հանդիպումները կարևոր միջոցառում են արտաքին քաղաքական գերատեսչության կազմակերպվածության մակարդակը բարձրացնելու առումով: Վերջին վեց տարիների ընթացքում անցկացված հինգ համաժողովների ընթացքում ձևավորվել են որոշակի աշխատաոճ և սկզբունքներ, որոնք էական նշանակություն ունեն ոչ միայն ԱԳՆ–ի և դիվանագիտական առաքելությունների միջև աշխատանքի արդյունավետության բարձրացման և աշխատաոճի, մոտեցումների, հայացքների մոտարկման առումներով, այլ նաև այդ համաժողովներին օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցության առումով: